

տանդինուպաւղիս, որոց անուանքն էին միումն Ղեւոնդ եւ միւսումն Կորին. երթեալք յարեին յԵզնիկն, իբր առ ընտանի եւ սննդակից իւրեանց. եւ առաջի դընէին սուրբ հարանցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

52 Իսկ երանելեացն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ զեկեղեցական զգրոց զգումարութիւն կանխաւ ի յունարէն բարբառայ ի հայերէն թարգմանեալ, եւ զբազումս եւ զհայրապետական սրբոց ճշմարտապատում իմաստութիւնս յաւրինեալ ի հայ լեզու: 53 Դարձեալ յետ այսորիկ առեալ հանդերձ Եզնկաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանեալսն՝ հաստատեր ճշմարիտ արիւնակաւքն բերելովք. եւ շատ եւս այդ մեկնութիւնս գրոց սրբոց՝ թարգմաներ ըստ հայերէն նշանագրացն: 54 Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ ընթերցուածոց գրոց սրբոց պարապէին երանելի սուրբ հարքն զտիւ եւ զգիշեր. եւ նովին ծաղկեալք եւ շահաւետեալք՝ արիւնակ բարեաց ուսումնասիրաց առընթերակացացն լինէին. մանաւանդ զի ունէին եւ զպատուիրակսն զգուշացուց(ից) յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջինն պատուիրէ՝ *Յաւրէնս Տեանն խորհել ի տուէ եւ ի գիշերի*<sup>ա</sup>. եւ երկրորդն ասէ. Միտ դիր ընթերցուածոց գրոց միսիթարութեան, վարդապետութեան. մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեայ եւ ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի. զգոյշ լինիջիր անձինդ եւ վարդապետութեանդ, եւ ի դմին յամես ջիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուցես եւ զայնսիկ որ քեզն լսիցես:

55 Ապա դարձեալ յետ այնպիսի առաւել եւ ուսաւոր վարդապետութեանն, սկսեալ երանելոյն Մեսրոպայ ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի զաւրութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէ[ակա]յնաց եւ առաքելականաց կարգեալ եւ յաւրինեալ՝ լի ամենայն ճաշակաւք աւետարանական անհաւատոցն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս եւ արիւնակս ի յանցաւորացս աստի ճշմարտութիւնն բերելով, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալսն յերիւրելոյ նկարեաց, զի հեշտընկալք եւ դիւրահասոյց տիմարագունացն: 56 Եւ մարմնական իրաւք զբաղելոցն՝ ուսցին սթափել, եւ ի զուարթացուցանել եւ հաստա-հիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

57 Եւ այսպէս ընդ ամենայն կողմանս Յայոց եւ Վրաց եւ Աղուանից՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց՝ զամառն եւ զձմեռն, զտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ զնորոգագիւտ վարդապետութիւնն ուսուցաներ: 58 Եւ իւրովի իսկ ճանապարհորդեալ աւետարանական եւ ողջապատումն բանիւ յաղագս հաւատոյ եւ վարուց առաջի թագաւորաց եւ իշխա-

<sup>ա</sup> Յմտ. Սաղմ. Ա 2: